

Քաղաքապետների դաշնագիրը Եվրամիության կողմից մեկնարկած նախաձեռնությունն է, որը կոչված է համընդհանուր կամավորական պատասխանատվությամբ միավորելու տեղական ինքնակառավարման մարմիններին և տարածաշրջանային իշխանություններին՝ հոգուտ կանաչ տնտեսական աճի և կյանքի որակի բարելավման:

Դաշնագիրը ստորագրողները կամավոր կերպով համաձայնվում են էներգա-արդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում իրականացնել համապատասխան գործողություններ, որոնք թույլ կտան մինչև 2020թ. նվազագույնը 20%-ով կրճատելու ածխաթթու գազի (CO₂) արտանետումները:

2008թ. տրված մեկնարկից սկսած, Քաղաքապետների դաշնագիրը դարձել է եվրոպական և այլ երկրներում տեղական ինքնակառավարման մարմիններին կայուն էներգետիկ զարգացման ռազմավարությունների մշակման և իրականացման գործում խրախուսելու և աջակցելու առաջատար նախաձեռնություն: Այդպիսով, Դաշնագիրը նպաստում է կանաչ տնտեսության զարգացմանը և քաղաքներում կյանքի որակի բարձրացմանը՝ նպաստելով էներգիայի մատչելիությանը, ստեղծելով աշխատատեղեր, բարելավելով սոցիալական և տնտեսական բարեկեցությունը և պայքարելով կլիմայի փոփոխության դեմ:

«Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագրի գրասենյակը, որը գտնվում է Լվովում (Ուկրաինա) և ծրագրի հիմնական փորձագետները, որոնք գտնվում են Կիևում (Ուկրաինա), Երևանում (Հայաստան), Թբիլիսիում (Վրաստան) և Ալմաթիում (Ղազախստան) վարչական, տեխնիկական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ծրագրին մասնակցող հետևյալ տասնմեկ երկրներին՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա և Ուզբեկստան:

Տեղական իշխանությունները՝ որպես հիմնական դերակատարներ

Տեղական ինքնակառավարումը քաղաքացիներին ներգրավելու և հանրային ու մասնավոր շահերը համաձայնեցնելու կառավարման ամենամոտ մակարդակն է: Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները կարող են էականորեն և դրական կերպով ազդել կյանքի որակի (օրինակ՝ մատչելի էներգետիկ ծառայություններ, մաքուր օդ և այլն) և քաղաքի տնտեսական դինամիկայի վրա: Մեծ և փոքր քաղաքները, ինչպես նաև քաղաքային շրջանները կարող են էական դեր խաղալ կլիմայի փոփոխության մեղմման գործում, քանի որ դրանք պատասխանատու են ածխաթթու գազի (CO₂) զրոքալ արտանետումների մոտ 70%-ի համար:



Պարտավորություն

Քաղաքապետների դաշնագիրը «պարզապես ևս մեկ այլ քարոզարշավ չէ», այլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստանձնած լուրջ պարտավորություն, որը հիմնված է էներգետիկայի և կլիմայի փոփոխության մեղմման բնագավառներում ստույգ և քանակական թիրախների վրա: Քաղաքների պարտավորությունները և նպատակների իրականացման գործընթացում առկա առաջընթացը խստորեն վերահսկվում են Եվրահանձնաժողովի կողմից ստեղծված գիտական ծառայություններ մատուցող «Միավորված հետազոտական կենտրոն» կազմակերպության կողմից: Սա Քաղաքապետների դաշնագիրը դարձնում է եզակի նախաձեռնություն, որը թույլ է տալիս խրախուսել գործողությունների իրականացումը տեղական մակարդակով, հաշվի առնելով ազգային առաջնահերթությունները:

Որպես իրենց կամավոր պարտականության մի մաս, քաղաքները զարգացնում են քաղաքական և վարչական հմտություններ, որոնք անհրաժեշտ են տեղական կայուն էներգետիկ զարգացման քաղաքականության իրականացման, ինչպես նաև «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» մշակման և Քաղաքապետների դաշնագրի Բյուրոսի գրասենյակ ներկայացնելու համար: Կայուն էներգետիկ զարգացմանն ուղղված գործողություններն ամփոփող այս փաստաթուղթը ներկայացվում է Դաշնագիրը ստորագրելու պահից սկսած մեկ տարվա ընթացքում: Քաղաքային համայնքներում էներգաարդյունավետության և կլիմայի փոփոխության մեղմման նպատակներին հասնելու համար այս փաստաթուղթը ծառայում է որպես ճանապարհային քարտեզ: 2014թ. փետրվարի դրությամբ ներկայացվել են ավելի քան 3300 «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիր», որոնցից 1800 արդեն հաստատվել են:

Զարգացում

Նախաձեռնությանը միացել են ավելի քան 5400 տեղական իշխանություններ և ինքնակառավարման մարմիններ մոտ 50 երկրից, որոնցից 80 քաղաք ներկայացնում են Արևելյան Եվրոպան, Հարավային Կովկասը և Կենտրոնական Ասիան: Բացի այդ, իրենց տեղական իշխանությունների միջոցով Քաղաքապետների դաշնագրում ներգրավված են Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրների ավելի քան 10 միլիոն քաղաքացի:

Աջակցություն

Քաղաքապետների դաշնագիրը տեղական և տարածաշրջանային առաջատար իշխանությունների աճող միջազգային համայնք է, որը հզոր աջակցություն է ստանում քաղաքական (Եվրահանձնաժողով, ազգային և տարածաշրջանային կառավարություններ և այլն) և ֆինանսական (Եվրոպական ներդրումների բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, մասնավոր բանկեր և այլն) կառույցներից:

Դաշնագիրը ստորագրողները կարող են օգտվել Դաշնագրի գրասենյակների, ազգային և տարածաշրջանային համակարգողների, աջակիցների և ներգրավված այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող բազմատեսակ աջակցությունից, ուսուցման դասընթացներից և համագործակցության հնարավորություններից: Ավելին, այլ երկրների օրինակելի փորձը կարող է օգնել տեղական իշխանություններին՝ համոզելու իրենց կառավարություններին և գործընկերներին միանալ Քաղաքապետների դաշնագրին:

Ստեղծվել են մի շարք մեթոդաբանություններ և գործիքներ, որոնք կոչված են աջակցելու Դաշնագրին միացած Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի քաղաքներին իրենց գործողությունների ծրագրերը մշակելու և իրականացնելու ընթացքում:

Այս հրապարակման բովանդակության ողջ պատասխանատվությունը կրում է «Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագիրը: Այն անպայմանորեն չի արտացոլում Եվրահամայնքների կարծիքը: Այստեղ պարունակվող տեղեկատվության ցանկացած ձևով օգտագործման համար Եվրահանձնաժողովը պատասխանատու չէ:

Ավելին, Եվրահանձնաժողովի Միավորված հետազոտական կենտրոնը Դաշնագրին միացած քաղաքներին անգլերեն և ռուսերեն լեզուներով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրում, ինչի նպատակն է հասցեագրել քաղաքների կողմից առաջարկվող տեխնիկական հարցերը: Այդպիսով, Միավորված հետազոտական կենտրոնը համալրում է Քաղաքապետների դաշնագրի գրասենյակների կողմից տրամադրվող աջակցությունը:

Ազդեցություն

Դաշնագրի հաջողությունը ստորագրողների կողմից ձեռնարկված կոնկրետ քայլերի և միջոցառումների հետևանք է: Իրականացնելով «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում» նկարագրված գործողությունները, տեղական համայնքները ստանում են օգուտներ էներգետիկ ծառայությունների մատչելիության, էներգասպառման հետ կապված ծախսերի նվազեցման, էներգախնայողական միջոցառումների իրականացման բնագավառում ներդրումների ներգրավման, աշխատատեղերի ստեղծման և համայնքային բյուջեի միջոցների խնայման շնորհիվ:

Դաշնագրի մասնակիցները հետապնդում են ընդհանուր նպատակ, այն է՝ իրենց քաղաքացիներին տրամադրել կայուն բնապահպանական, սոցիալական և տնտեսական միջավայր, ինչպես նաև նպաստել ռեսուրսների սպառման և կլիմայի փոփոխության հետ կապված գլոբալ մարտահրավերների լուծմանը:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կայքէջ

www.soglasheniemerov.eu

en.wikipedia.org/wiki/Covenant_of_Mayors

Բոլոր հրապարակումները հասանելի են ռուսերեն և այլ լեզուներով.

Հրապարակումներ՝ www.soglasheniemerov.eu/media/communication-materials_ru.html

Նկարներ՝ www.soglasheniemerov.eu/media/videos_ru.html

Հետադարձ կապ

info-east@eumayors.eu



The Covenant of Mayors East project is funded by the EU.

«Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագիրը կառավարվում է «Energy Cities» կազմակերպության գլխավորությամբ գործող կոնսորցիումը, որի կազմում ընդգրկված են «Climate Alliance» կազմակերպությունը, «Ուկրաինայի էներգաարդյունավետ քաղաքներ» միությունը և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը (CAPEC):

Այս հրապարակման բովանդակության ողջ պատասխանատվությունը կրում է «Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագիրը: Այն անպայմանորեն չի արտացոլում Եվրահամայնքների կարծիքը: Այստեղ պարունակվող տեղեկատվության ցանկացած ձևով օգտագործման համար Եվրահանձնաժողովը պատասխանատու չէ:

